ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«12» «հունիսի» 2024 թ. № 208-Ն

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 101-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռ. Ալիխանյանի 2024 թվականի հունիսի 5-ի N Ն/20.1/6417 զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մարտի 29-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անհատական կազմը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հունվարի 7-ի N 3-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 101-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Հրամանի հավելվածում «Սամվել Ժամհարյան - շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի ղեկավար:» բառերը փոխարինել «Արուսյակ

Ավետիսյան - շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավաբան:» բառերով:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

6/12/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«12» հոկտեմբեր 2024թ.

ք. Երևան